ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№04/3253 «20» 03 2014թ.

ՀՀ քաղաքաշինության
նախարարի տեղակալ
տիկին Ռ.Ալավերդյանին

Հարգելի տիկին Ալավերդյան

«Հետ–Ռիո+20» գործընթացի շրջանակներում կից ներկայացվում է տեղեկատվություն Երևան քաղաքում իրականացվող կանաչապատման աշխատանքների և «Տեղական ինքնակառավարման մարմինները հանուն կայունության» ասոցիացիային անդամակցելու վերաբերյալ :

Հարգանքով՝

Վ.Վարդանյան

Կատ.Վ.Սիմոնյան
Հեռ. 514 185

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԻՄՆԱՐԿ
Մուտք № 3/2275-14
«21» 03 2014թ.

Երևան քաղաքում իրականացվող կանաչապատման աշխատանքներ

Բնապահպանության ոլորտում Երևանի քաղաքային իշխանությունների /համապատասխան գերատեսչությունների հետ միասին/ քաղաքականության հիմնական նպատակը բնապահպանական անվտանգության ապահովումն է: Այդ թվում մայրաքաղաքի կայուն և համաչափ զարգացման նպատակով շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխատեսումն ու կանխարգելումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունն ու բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը:

Երևան քաղաքում /կիսաանապատային հողակլիմայական գոտի/ կանաչ տարածքները ստեղծվել են բացառապես արհեստական ճանապարհով և ոռոգովի պայմաններում:

Տասնյակ տարիներ առաջ անցկացված ոռոգման ցանցի քայքայման, 1990-ականների էներգետիկ ճգնաժամի, մայրաքաղաքի տրանսպորտային հոսքերի և քաղաքաշինության տեմպերի մեծացման հետևանքով Երևանը կորցրեց ժամանակին ձևավորված էկոհամակարգերի կայունությունը և կենսաբազմազանության որակը և քանակը:

Հետևաբար Երևանի ոռոգման ցանցը և կանաչ տարածքներն ունեն ճիշտ պլանավորման, կառավարման, պահպանման և ընդլայնման խիստ անհրաժեշտություն:

2009-2013 թթ վերանորոգվել և անցկացվել է ավելի քան 70 կմ ոռոգման ցանց, ինչի շնորհիվ ոռոգման ցանցի ընդլայնման և վերանորոգման իրականացվել են կանաչապատման /ծառատնկման/ և գեղագիտական ծաղկապատման լայնածավալ աշխատանքներ՝ փողոցներում, այգիներում, պուրակներում, անտառ–պուրակներում:

Լայնածավալ աշխատանքների շնորհիվ մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները ներկայումս կազմում են 842.2 հա, իսկ 2014 թվականին այն կհասնի 850 հա–ի:

Այս տարի մայրաքաղաքում արդեն մեկնարկել են կանաչապատման և ծաղկապատման աշխատանքները: Երևանի համաչափ զարգացման համատեքստում

գործընթացն իրականացվում է բոլոր վարչական շրջաններում2014թ. ծրագրով Երևանի ծաղկային տարածքների ընդհանուր մակերեսը կհասնի 6.2 հա-ի, մայրաքաղաքը կզարդարեն 2 մլն 300 հազար ծաղիկներ, այդ թվում՝ 40 հազար վարդ և 650 հազար կակաչ: Ծառատունկերի ընթացքում մայրաքաղաքում կտնկվի նաև շուրջ 5000 գնդաձև ակացիա և 1500 թույա: Կանաչ տարածքները պահպանելու նպատակով այս տարի մայրաքաղաքի ոռոգման ցանցը կընդլայնվի ևս 23 կմ-ով: Համակարգված և մասնագիտորեն հիմնավորված կանաչապատում իրականացնելու մասով հաշվի կառնվեն նաև Երևանի բնակլիմայական պայմանները, տեղանքը և անհրաժեշտ այլ գործոններ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ» ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքը շուրջ 40 քաղաքների հետ ունի համագործակցության ստորագրված համաձայնագրեր, որոնցում բնապահպանության բնագավառում համագործակցությունը և փորձի փոխանակումը կարևոր դեր են զբաղեցնում: Վերջերս Երևան քաղաքի ավագանու որոշմամբ Երևանն անդամակցեց նաև «Տեղական ինքնակառավարման մարմինները հանուն կայունության (Local Governments for Sustainability-ICLEI)» ասոցիացիային:

«Տեղական ինքնակառավարման մարմինները հանուն կայունության (Local Governments for Sustainability-ICLEI)» ասոցիացիան ամբողջ աշխարհում գործող կայուն զարգացման ուղին որդեգրած քաղաքների միակ ցանցն է:

1991 թվականին հիմնադրվել է ICLEI Եվրոպական քարտուղարությունը՝ Գերմանիայի Ֆրայբուրգ քաղաքում: Այս ցանցին միացել են Եվրոպական 38 երկրների 175 քաղաքներ և կազմակերպություններ:

Հետխորհրդային երկրներից ցանցին միացել են Վրաստանի Թբիլիսի, Ուկրաինայի Օդեսա, Հայաստանի Հրազդան, Լատվիայի Ռիգա քաղաքները և Ռուսաստանի «Կիրով քաղաքի վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության և էկոլոգիական նախաձեռնությունների կենտրոնը»:

Հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության նախարարության /գրություն՝ 31.08.2012թ. հ. 1/11/11396/ և ՀՀ արտաքին գործերի նախարարության /գրություն՝ 05.03.2013թ. հ. 16/02195/ կողմից ստացված դրական կարծիքները Երևան քաղաքի ավագանու 11.02.2014թ. հ. 119-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետարանը հայտ ներկայացրեց ICLEI գլխավոր քարտուղարություն՝ անդամակցելու նպատակով:

Իր հերթին Երևանի քաղաքապետարանն գտնում է, որ օգտագործելով եվրապական քաղաքների նորամուծությունները և դրական փորձը, անդամակցությունը կարող է օգնել Երևան քաղաքի նոր բնապահպանական քաղաքականության մշակման, քաղաքային ենթակառուցվածքների /տրանսպորտ, էներգաարդյունավետություն, թափոնների կառավարում և էկոհամակարգերի կայունություն/ բարելավման հարցերում: